

Մ. Ե. ՍԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎԱՆԵՐԻ ԵՎ ՍԻՆՈՂԻ ՍՈՈՂԱՄՊԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայ եկեղեցական մատենագրական հուշարժանները մեջ իրենց արտացոլումն են գտել նաև տարբեր բժշկագիտական տեղեկություններ: Այս առումով առանձնակի արժեք է ներկայացնում հատկապես «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Այն ամփոփում է մոտ 2000 կանոն, որոնք սրատկերացում են տալիս նաև միջնադարում տարածված հիվանդությունների և նրանց նկատմամբ կիրառվող կանխարգելիական միջոցառումների մասին: «Կանոնագիրք Հայոց»-ը ընդգրկում է ինչպես հայկական ծագում ունեցող, այնպես էլ հունարենից և ասորերենից բարգմանված կանոններ: Մեզ հետաքրքրող նյութերի ուսումնասիրման համար օգտվել ենք Ա. Դևոյանի /1913 թ./ և Վ. Ա. Հակոբյանի /1964, 1971 թթ./ կողմից հրատարակված ժողովածուներից:

Հնադարյան կանոնագրքերի բժշկագիտությանը վերաբերող կանոնները ընդգրկում են տարբեր բեմաներ՝ հիվանդություններ /բոր, էպիլեպսիա, ամուլություն, սերմնահոսություն/, ինչպես և արյունակցական ամուսնությունների, ամուսնական կյանքի հիգիենա, քաղցրահամության և այլ հարցեր:

Բոր հիվանդության մասին ամենահին հիշատակումը համդիպում է «Կանոնք հարանց հետևողաց»-ում, որի 5-րդ և 7-րդ կանոններով ամուսնալուծությունը խստիվ արգելվում էր: Դա թույլատրվում էր միայն բորոտության, պիսակության, ընկմավորության դեպքերում: «Զկին որոշել յանձն է անձնասպանութեան վրէժ է, ոչ մի ինչ պատճառք համարձակեն զնա հանել, ոչ ամուլիւն, ոչ ծախողութիւն, ոչ վատութիւն, քայց բորոտութիւն, և պիսակութիւն, և դաւախութիւն, և զոնջութիւն, և կախարդութիւն, կամ հանապազ պռոցկութիւն՝ ըստ տէրտնական արքինին»¹ 11-րդ կանոնը բորոտների հետ սեռական կապի համար դատապարտում է մահապատժի²: Հետագա տարիներին մահապատժը փոխարինվում է քաղցրահամ քաղցրով և այն միտքն է շեշտվում, որ բոր հիվանդությունը կայտղ է անցնել սերունդներին: 18-րդ կանոնում թվարկվում են փոխանցիկ /տարափոխիկ/ հիվանդությունները, այդ թվում՝ բորը:

«Կանոնք սրբոյն Գրիգորի» /325 թ./ 26-րդ կանոնում և «Կանոնք Շահապիվանի ժողովի» /445 թ./ 16-րդ կանոնում բոր հիվանդությունը հիշատակվում է լուրովի՝ որպես անեծք կաշառատության համար:³ Ուշագրավ է «Կանոնք Աթանասի հարցումը»-ը /4-րդ դար/, որի 26-րդ և 57-րդ կանոններում վկայություններ կան բորոտանոցների գոյության և տեղեկություններ այս հաստատությունների կարիքները հոգալու և միջոցներով ապահովելու մասին: Տայրեր ժամանակներում կազմված կանոնները զանազան զանցանքների համար դատապարտում էին բորոտանոցներում հարկադիր աշխատանքների 1-10 տարի

¹ Վ. Ա. Հակոբյան, Կանոնագիրք հայոց, հա. Ա, 1964, էջ 104:

² Նույն տեղում, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 248, 257, 258:

Այս մեջբերումը ցույց է տալիս, որ արդեն չորրորդ դարում հասունացել էր հիվանդությունների, հատկապես բորի վարակելիության մասին գաղափարը: Այստեղ ամիրաժեշտ է հիշեցնել, որ հիվանդանոցները և բորոտանոցները, համաճայն Ներսես Ա-ի որոշման, կառուցվում էին բնակավայրերից հեռու և բոլորսներին ու այլ հիվանդներին արգելվում էր հեռանալ իրենց հատկացված տեղերից և շփվել առողջների հետ:

Ներսես Մեծի վարքում ասվում է, որ Հայոց այս Հայրապետի օրոք աղքատները, հիվանդները, բորոտները, ամրամալույծները գտան ապաստարան, իսկ մինչ այդ նրանք արտաքսվում էին բնակավայրերից և անօգնական զոհվում վայրի գազաններից կամ ձյունախեղդ լինում:

«Բազմաթիվ շինություններ ի պատսպարան և ի սփռվումն աղքատաց, հիւանդաց և ուրկաց, յորոց բազումք ամխնամ և ամայեցելու և հալածեալք յսնեմակ տեղիս գազանակորք, զետափէժք, ծիւնախեղդք և անգլիտ կորնչէին »:

Ներսես Մեծի մահից հետո /372 թ./, ում նախածեոնությամբ կառուցվում էին բարեգործական հիմնարկներ՝ քրիստոնեությունը ժողովրդականացնելու համար և հեթանոսությունը արմատախիլ անելու նպատակով, այդ հիմնարկները աստիճանաբար անկում ապրեցին: Պարտավի եկեղեցական ժողովի /768 թ./ 17-րդ կանոնում ասվում է, որ բարեգործությանը վերջ է տրվել, հիվանդանոցները և բորոտանոցները քանդվել են, իսկ խաղտրականները, ազատները ոչինչ չեն անում դրանք վերականգնելու համար:⁸

Այսպիսով, Աշտիշատի ժողովի որոշմամբ և Ներսես Մեծի հրամանով կառուցած հիվանդանոցները, բորոտանոցները գոյություն ունեցան մինչև 768 թ.:

Հիվանդանոցների, բորոտանոցների կառուցումը ոչ միայն բարեգործական միջոցառում էր, այլ նաև խորապես մտածված միջոցառումներ՝ վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ բորի տարածումը կանխարգելելու նպատակով: Հիվանդանոցների կառուցումը բնակավայրերից հեռու, արտեղից արգելվում էր հիվանդներին հեռանալ, և մյուս կողմից, նրանց կենսական կարիքների ապահովումը, ինչպես և հիվանդների սպասարկումը, մյուս կողմից՝ բորոտների հետ ամուսնական կապի այգեբույսը և ապահարգանի թույլատրումը ամուսիններից մեկի հիվանդանալու դեպքում, իրենցից ներկայացնում էին համակապակցված կանխարգելական միջոցառումներ բորի և այլ վարակիչ հիվանդությունների դեմ:

Հիվանդանոցները և բորոտանոցները կառուցվում էին բուժիչ հատկություններ ունեցող հանքային աղբյուրների մոտ: Դեռ հեթանոսական ժամանակներից երկրպագում էին ջրերին՝ բազմամյա փորձի շնորհիվ հայտնաբերելով նրանց բուժիչ հատկությունները: Այդ մասին կան բազմաթիվ վկայություններ: Այսպես, Դվին ավանի մոտ կար Գըր-գըր ջուր կոչվող աղբյուր, որի ջրով բուժվում էին ցանավորում, ջոր ունեցող, բույսով տառապողները: Նրանք լվացվում էին այդ ջրով, նստվածքով օծում ախտահարված մասերը:

Դևոնդ Ալվյանը «Հուշիկների» Թեոդորոս Սալահնուցուն նվիրված դրվագում, գրվում է նաև դեռևս 3-րդ դարի վերջում Ներսես Մեծից առաջ կառուցված հիվանդանոցի մասին: Սալահնույաց գավառի, որը գտնվում էր Դերջան և Եկեղյաց Երզնկա գավառների միջև, գավառապետի որդին՝ Աբեմադորոսը /ծնված 269 թվականին/ 15 տարեկան հասակում հիվանդացավ, նրա մարմինը սրտովեց ցանով, խոցերով, վերքերով: Նրա մայրը՝ Աղվիթյուն, 7 տարի անախյունք բուժում

⁸ Ա. Դևոնան, Կանոնագիրք Հայոց, 1913, էջ 170-171:

էր նրան և, կորցնելով որդւոյ ապաքինման հույսը, առանձնանում է իր կալավածքում՝ Սիխիբոխսան լճի մօտ: Այնտեղ մա տնսնում է իր որդւոյ նման հիվանդների, որոնք ամապաստան և ամօգնական շրջում էին անտառում: Հեթանոսական տվորոյթների համաձայն մրանց փտարել էին բնակավայրերից: Աղվիթան խորապես զգացված էր այդ դժբախտների տառապանքներից: Նրանց համար մա կառուցում է Սեզենմուտ ձորակում, Արքենմուտ աղբյուրի մոտ, ապաստարան և բնակեցնում 35 եհվանդ, այդ թվում՝ իր որդւոյն, և սպասարկում իր միջոցներով: Հիվանդները խմում էին բուժիչ ջուրը, լվանում վերքերով ախտահարված մարմինները:

«Որդւոյն ցատց վրայ գործվելով՝ կու հիշէր անոր պէս ցաւագարներ մանաւանդ երբ կու տնսնէր գոմանս անոնցմէ, որք ըստ բարբալոս օրինանց հեթանոսութեան, հալածուելով ի շէնից և ի բնակութեանց, ամայի անբնակ տեղունք կու քափառէին, իբրև մգովեայք և անիծեայք: Այս տվորութիւնս կար մաև մեր ազգին մէջ, գոր յետոյ շատ խնամօք ջանային ջնջել Ս. Լուսաւորիչն և իր համանուն սուրբ քոռն Ներսէս շենքերէ հեռու տեղուանք հիւանդանոցներ և ուրկանոցներ բոթատներու տեղ շինելով, որք և այդպիսի քարերարութեան տեպեաց մէջ հմագոյններն կու տեսային: Բայց իրենցմէ առաջ այլ ազնուասիրտ տիկինս Աղուիթան Արքենմուտ աղբեր ջով շինեց տառապելոց պատասպարան մը, ուր ժողովեց 35 ցավագարք, որք զբասիրտ Աղուիթայի տուրքով կապրէին, կօրնէին իւրեանց քարերարքը»:⁹

Որոշ ժամանակ անց այդ զավառի միջով տանում էին քրիստոնեւորյան տարածման համար մահապատժի դատապարտված Գլիգորին /Լուսավորչին/: Նրան տեղավորեցին հիվանդների ապաստարանում, որը զգվանքով և սարսափով շրջանցում էին առողջները: Այստեղ Աթենադոբոսը, հանդիպելով Գլիգորին, ընդունում է քրիստոնեւորյան, կնքվում է Արքենմուտ աղբյուրի ջրելում և հրաշքով ապաքինվում: 1140 թ. մի պատմական հուշարձանում հաղորդվում է, որ տարիներ անց Գլիգոր Լուսավորիչը մի մատուտ է կառուցում և վերը մշված անձանց զերեզմանի վրա տապանադար դնում:¹⁰

Որ այս վկայաբանությունում մշված աշխարհագրական տեղանունները ստույգ են և գոյություն են ունեցել մաև պատմական տվյալ անձիք, կան վկայություններ: Այսպես, աշխարհագրագետ, պատմաբան Գ. Ինճինյանն իր աշխատության մէջ նշում է Սիխիբոխսան ձորակը և Արքենմուտ աղբյուրը և Սալահունյանց զավառը:¹¹

Մենք «Յայսմատուրք»-ում ևս տեղեկություններ ենք գտել Աղվիթայի կառուցած հիվանդանոցի մասին. «և մայր մորա Աղվիթան կին ողորմած յորդորեաց զայդ իր և շինեցին տեղին ցաւագնեւոց առ ափն յորդն մոտ յաղբլւրն, որ կոչեր Արքենմուտ և էին անդ ոգիք երեսուն և եինգ, որք հոգային զպէտ կենաց ողորմութեամբ»:¹²

Համադրելով պատմական աղբյուրների տվյալներն ու Գ. Ալիշանի վկայակցած վարքի տեղեկությունները, եզրակացրել ենք, որ առաջին քարտաւանոցը կառուցվել է Հայաստանում 290-291 թթ.:

⁹ Գ. Ալիշան, Հուշիկը հայրենյաց հայոց, հտ. Ա. 1869, էջ 235-237:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Գ. Ինճինյան. Ստորագրություն հին Հայաստանեաց, 1922, էջ 22:

¹² Յայսմատուրք ըստ կարգի ըմտրելագոյն օրինակի յայսմ ատուրց տէր Իսրաէլի կառ Յայսմատուրք Իսրաէլի, 1834, էջ 211-212:

Հայաստանում, ինչպես և Արևելքի և Եվրոպայի երկրներում նախաքրիստոնեական ժամանակաշրջանում գոյություն է ունեցել թոթոտների մեկուսացման պարզունակ միջոց՝ նրանց վտարում էրն բնակավայրերից: Հայաստանում առաջին թոթոտանոցի հիմնումը երթող դարի վերջում մեկուսացման նոր ձև էր, ոլտվ հիվանդության կանխարգելման միջոցառումների սկիզբը դրվեց: Այդ հայցում Հայաստանը առաջ անցավ այլ երկրներից մոտ 300 տարով: Առաջին թոթոտանոցը Եվրոպայում քաղվել է 571 թ. Ֆրանսիայում, Գերմանիայում և Իտալիայում՝ 7-րդ դարում: Հ. Ե. Մոլեզվորտիի տվյալներով, առաջին թոթոտանոցը Անգլիայում քաղվել է 600 թ., Իռլանդիայում՝ 7-րդ դարում:¹³

Թոթոտանոցները Հայաստանում գոտ մեկուսարան չէին, հիվանդները, ցավազարները բուժվում էին համալսարանի ջրերով ու նրանց մոտավաճքով, բույսերից պատրաստված դարմաններով: 5-րդ դարում բժշկանոցի առկայության մասին ևս մեկ վկայություն հանդիպել ենք Հովհան Մանդակունու ճառերում:

«Վիրաւորք յորժամ ի բժշկանոցս մտանին չեն պէտք այլ և խորհրդոց, քայց միայն դեղ վիրին որոնել, և զգաւն բժշկել», «մարք էր արուեստիւք բժշկութեան խարելով և կարելով, և դարմանս ցաւոցն առնելով բժշկել»¹⁴:

Այդ տողերից պարզվում է, որ դեռ 5-րդ դարում արտաքին ծածկույթների բուժման համար հայտնի բժշկական արվեստի միջոցներից էին, քացի սպեղանիներից՝ դարմաններից վիրահատությունը և այդումը /կուսգուլացիան/:

Այսպիսով Հայաստանում առաջին հիվանդանոցը կառուցվել է 290-291 թթ., իսկ հիվանդանոցային գործը կիսնվել է 4-րդ դարում, Աշտիշատի ժողովի որոշումների համաձայն: Հիվանդանոցների առաջացումով բժշկական արվեստը բարձրացավ նոր մակարդակի: Եկեղեցական որոշումներում արտացոլվեցին վարակելիության գաղափարը, կանխարգելական միջոցների, ինչպես և հիվանդանոցների սպասարկման ապահովման մասին: Քրիստոնեության ընդունման հետ կապված տարածվեց հիվանդների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը:

Բժշկապատմական մեծ նշանակություն ունեն 9-14-րդ դարերում կազմված «Դատաստանագրքերը»՝ «Դավթի Ալավկա որդու կանոնները» /12-րդ դ./, Մխիթար Գռչի «Դատաստանագիրքը» /12-րդ դարի վերջ/, Մնրատ Սպարապետի «Օրենք» կանոնը ընդհանրական եկեղեցականաց և աշխարհականաց» /1265 թ./: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում այդ դատաստանագրքերի այն նորմերը, որոնք վերաբերում են հիվանդություններին և նրանց հետ կապված կենցաղային լրավիճակներին, ընտանիքի և հասարակության մեջ առաջացած փոխհարաբերություններին: Ամուսնա-ընտանեկան նորմերում հաճախ է քննարկվում թոր հիվանդությունը: Դա պատահական չէ, այլ կենսական կարևոր նշանակություն ունեն հիվանդության տարածման պատճառով: Մխիթար Գռչի սահմանած կանոնները արգելում էին ամուսնությունը թոթոտների հետ, քույրատրվում էր ապահարգանք ամուսիններից մեկի հիվանդության դեպքում, եթե հիվանդությունը թաքցվել է ամուսնամալուց առաջ, իսկ հիվանդության մասին տեղյակ լինելու դեպքում, կամ եթե հիվանդացել է ամուսնամալուց հետո, առողջ ամուսինը պարտավորվում էր խմանել հիվանդին ցմախ: Բոլոր հիվանդին արգելվում էր ծառայությունը քանակում: Այս որոշումների նպատակն էր կանխել վարակի տարածումը ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակության մեջ:

¹³ Ն. Ա. Տոբուև, 1969, էջ 20, 34, 46:

¹⁴ Հ. Մանդակունի, Ճառք, 1860, էջ 43, 191:

Միևնույն ժամանակ այդ նորմերը պաշտպանում են հիվանդի նյութական շահերը: Դատաստանագրքի սահմանած կարգերը բորոտանոցների սպասարկման վերաբերյալ հիմնականում կրկնում են կանոնագրքերի որոշումները: Թիվ 78 հոդվածի համաձայն ամասնապիլծը և այլ զանցանքներ կատարած անձինք պատժվում էին բորոտանոցներում աշխատանքով կամ տուգանվում էին բորոտանոցի օգտին դրամ մուծելով: Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» բորի մասին խոսվում է ամուսնության և ընտանիքի իրավունքներին վերաբերող 76, 96, 97 հոդվածներում: 76-րդ հոդվածում /էջ 48/ ասված է՝ ամուսիններից մեկի «ամբողջիկ բորոտությամբ» կամ «պիտանությամբ» հիվանդանալու դեպքում քույրատրվում է ամուսնալուծությունը 7 տարի անց, իսկ երկուսի համաձայնությամբ՝ ավելի շուտ: Թիվ 96 հոդվածում կարգում ենք՝ եթե ամուսինը բորով հիվանդ կմեջ ապահարգանի համաձայնության դեպքում խոստանում է նյութական ապահովում, որպեսզի նորից ամուսնանա, ապա դա կարելի է եպիսկոպոսի քույրությունը:

«Եթե ունեք կին գողենալ կամ արեքի ի ցառց, և ճաշի անէ ընդ իր էրիկին, որ տա զիր պետքն, քանզի որ ապրի, և ինքն աճնու իր այլ կին, և տա քուրթ արձակման նորա, մա յօրենքս, դժար կու լինի արձակելն, բայց էպիսկոպոսն կարէ անիլ, զոր կամի»¹⁵:

Այս հոդվածները ունեին մարդասիրական մտեցում բորով և այլ հիվանդների նկատմամբ՝ պաշտպանում էին նրանց կենսական շահերը:

20-րդ դարի սկզբում Հայաստանում ուշադրության կենտրոնում էին տարածված վարակիչ հիվանդությունները: Հետաքրքրություն է ներկայացնում հայտնի բժիշկ և հասարակական գործիչ Ավետիք Բաբայանի կողմից հրատարակված «Եկեղեցական առողջապահություն»¹⁶ աշխատությունը, որտեղ բացահայտորեն նշվել են այն եկեղեցական ծեսերը, որոնք կրում են ոչ հիգիենիկ բնույթ և կարող են նպաստել որոշ հիվանդությունների տարածմանը, և առաջարկում է փոփոխություններ մտցնել նրանց կատարման ժամանակ: Նշանակալից էին էջմիածնի սինոդի կայացրած որոշումները և Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կողմից հաստատված 3 և 29 նոյեմբերի 1904 թ. որոշումները ամուսնացող տղամարդկանց և որբնայրի կամանց պարտադիր բժշկական ստուգման ենթարկելու մասին: Որոշումները նպատակ անել են կանխել յարքերկույթ, վեներական և այլ հիվանդություններ, որոնք կարող են փոխանցվել հաջորդ սերունդին: Այդ ժամանակաշրջանում մեծ ազդեցություն է ունեցել և ոչ մի եվրոպական երկրում:

Կովկասյան բժշկական ընկերության 1911 թ. միտոնից մեկում նորից քննարկվել է ամուսնացողների բժշկական քննության հարցը և որոշում ընդունվել արգելել ամուսնությունը սֆիլիսիս, պալարախտի, հոգեկան հիվանդությունների և ալկոհոլիզմի դեպքում:

Ինչպես տեսնում ենք, բժշկական արվեստը, որը Հայաստանում ծագել էր վաղնջական ժամանակներից, իր զարգացման ընթացքում առաջընթաց է կատարել որոշ խարցերում՝ հիվանդանոցների, հիվանդությունների, բուժման, վարակելիության կանխարգելման վերաբերյալ պատկերացումների զարգացման և գործնականում կանոնագրքերի և դատաստանագրքերի օրենսդրական ուժով հաստատված կանխարգելիչ միջոցառումների կիրառման շնորհիվ:

¹⁵ Ղլեմենտ Ա., Դատաստանագիրք Սմբատ Իշխանի Գումդստաղել, 1918, էջ 55:

¹⁶ Բաբայան Ա., Եկեղեցական առողջապահություն, Թիֆլիս, 1918: